Государственное учреждение
"Бюро по реализации
градостроительных программ"
Министерства градостроительства
Республика Армения

State Agency " Urban Development
Projects Implementation Unit"
at the Ministry of Urban Development
of the Republic of Armenia.

Հայաստանի Հանրապետության
Քաղաքաշինության նախարարության
«Քաղաքաշինական ծրագրերի իրականացման
գրասենյակ» պետական հիմնարկ

0010, ք. Երևան,Հանրապետության Հրապարակ
Կառավարական տուն 3,
0010, г. Ереван, пл. Республики, Дом Правительства 3,
Government House 3, Republic Square,
Tel.: 526550 Fax: 526550

07.11.16 N ՄՔ/1-355-16

<<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի պետ
Պարոն Մ. Անանյանին

Հարգելի Պարոն Անանյան,

Ի պատասխան Ձեր 31.10.2016 թ.
01/04.1/3946-16-16 գրության՝

Կից Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշման պատճենը, որպես՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 28.10.2016 թ. ընդունած թիվ 106/16 որոշման կատարման մասին տեղեկատվություն:

Հարգանքով՝

Տնօրենի պաշտոնակատար՝

Մ. Քյուրքչյան

Կատ. Իրավաբանական և գնումների
կազմակերպման բաժին
հեռ. 56-43-16

Գործ թիվ ԵԱՔԴ/4250/02/16

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ ԵՎ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

Հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին

«21» հոկտեմբերի 2016թ. ք.Երևան

ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) **դատավոր Հ. Շահնազարյանս**, քննարկելով վարույթիս տակ գտնվող ըստ հայցի՝ «Ագարակ» ԲԲ ընկերության ընդդեմ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի, երրորդ անձ՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի և «Խաչատուրյանի բիլդինգ գրուպ» ՍՊ ընկերության՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 05.10.2016 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԱՔԴ/4250/02/16 քաղաքացիական գործով Հայցվորի կողմից ներկայացված՝ հայցի ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը.

ՊԱՐԶԵՑԻ

Հայցվոր ընկերության կողմից հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի, երրորդ անձ՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի և «Խաչատուրյանի բիլդինգ գրուպ» ՍՊ ընկերության՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 05.10.2016 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 17.10.2016 թվականի որոշմամբ վերոհիշյալ հայցադիմումը վերադարձվել էր, որից հետո այն կրկին ներկայացվել է դատարան՝ թույլ տրված խախտումները վերացված վիճակում:

Հայցադիմումը և կից փաստաթղթերը դատավոր Հ. Շահնազարյանի աշխատակազմին են տրամադրվել 21.10.2016 թվականին:

Միաժամանակ, հայցվոր կողմը ներկայացրել է հայցի ապահովման միջոց կիրառելու պահանջի մասին միջնորդություն, որտեղ նշել է, որ հայցի ապահովում չձեռնարկելու դեպքում հնարավորն կլինի կնքել պայմանագիր, ինչը հնարավոր հայցը բավարարող դատական ակտի կատարումը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դրա կատարումը, ուստի միջնորդել է երրորդ անձանց արգելել «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով մրցույթի ընթացքում կատարել որևէ գործողություն, այդ թվում «Խաչատուրյանի բիլդինգ գրուպ» ՍՊ ընկերության հետ կնքել պայմանագիր:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97 հոդվածի 1-ին կետի համաձայն՝

«դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի

վատթարացումը: Հայցի ապահովումը թույլատրվում է դատավարության ցանկացած փուլում»

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝

«միջնորդությունը քննարկվում է այն ստացվելու օրը և կայացվում է որոշում»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝

«հայցի ապահովման միջոց է պատասխանողին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա հայցագնի չափով արգելանք դնելը»:

Թիվ ԿԴ/3511/05/10 գործով 27.04.2011 թվականի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածից հետևում է, որ հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ նման միջոց չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ կարող է վատթարացնել վեճի առարկա գույքի վիճակը:

Վերը նշված իրավական վերլուծություններից ելնելով՝ Դատարանը փաստում է, որ հայցի ապահովման միջոցների կիրառման հարցը քննարկելիս Դատարանի համար էական պետք է համարվի տվյալ գործով Դատարանին հայտնի տեղեկություններով նման միջոցների կիրառման նպատակն ու անհրաժեշտությունը: Ձեռնարկվող նման միջոցները պետք է ծառայեն վերը նշված դատավարական նորմերով սահմանված իրավական նպատակներին, կիրառվող միջոցները չպետք է լինեն ինքնանպատակ:

Ընդ որում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը ներկայացնում է հայցվոր կողմը, այն, որպես կանոն, քննության է առնվում առանց գործին մասնակցող մյուս անձանց գիտության և մասնակցության՝ հաշվի առնելով այդ ինստիտուտի նպատակն ու նշանակությունը, ապա հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունը Դատարանը որոշում է միջնորդության ներկայացման և դրա քննության պահին հայցադիմումին կից ներկայացված և միայն հայցվոր կողմի ներկայացրած փաստերով:

Տվյալ դեպքում ուսումնասիրելով ներկայացված հայցը և այն համադրելով միջնորդությամբ ներկայացված խնդրանքի հետ Դատարանը եկել է այն համոզման, որ հայցի ապահովման հայցվոր կողմի միջնորդությամբ պահանջվող միջոցը չկիրառելը կարող է անհնարին դարձնել դատական ակտի կատարումը կամ առհասարակ դժվարացնել:

Վերոգրյալների հիման վրա՝ Դատարանը գտնում է, որ միջնորդության քննության պահին ներկայացված փաստերով հայցվոր կողմի միջնորդությունը հիմնավոր է, բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ և 98-րդ հոդվածների պահանջներից և հայցի ապահովման կիրառման անհրաժեշտության էությունից ու դրա կիրառման նպատակահարմարությունից, ուստի այն ենթակա է բավարարման և անհրաժեշտ է անհապաղ միջնորդության ստացման օրը կայացնել որոշում՝ հայցի ապահովում կիրառելու մասին:

Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի համաձայն՝ պետք է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով ապահովել որոշման կատարումը:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգգրքի 97-99 հոդվածներով, 144 հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, 144[1] հոդվածի 2-րդ կետով, 145 հոդվածով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Հայցվորի կողմից ներկայացված՝ հայցի ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը բավարարել:

1.1.Հայցի ապահովման նպատակով երրորդ անձանց արգելել «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով գնումների ընթացքում կատարել որևէ գործողություն, այդ թվում «Խաչատուրյանի բիլդինգ գրուպ» ՍՊ ընկերության հետ կնքել պայմանագիր:

2. Որոշման կատարումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է անհապաղ կատարման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Հ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ